

5. Այսպիսով, հետազոտվում է դառնում հնավուրեք բանահյուսական թեկուզ և կցկտուր պատահիկ-մասունքները շահեկան դարձնել, դրանց գեղագիտական արժեքից բացի, նաև որպես էթնո-մշակութային պատմության սկզբնաղբյուր, մի հետազոտություն, որից, ցույց իս, անկասկածաբար կհանգեցնեն օգտվում մասնագետները:

ՔԱՄԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՈՐ ԳՐԱԹՈՒՄՆԵՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԴԱՐԱՆԱՀԱՅՆԵՐԻ

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ /ԸՍՏ 1983թ. ԴԱՏԱՑԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ/

1. 1972 թ. սկսած Դարակասանից /Քնհրան, Քավիզ, Նոր Զուղա, Ապահանի Զարմահալ, Փերիա, Բուրվար, Բեամարա, Գեափլա, Բեազազ, Մալախի և այլ գավառներից/ ներգաղթած հայերի հոծ զանգվածներ վերաբնակեցվեցին Հայկական ՍՍՀ մի քանի շրջաններում, ըստ այդմ՝ նաև Հրազդանի շրջանում, ուր զբաղվել են ստորև ներկայացվող նյութերը:

2. Հայտնի է, որ վաղեմի ժամանակներից ի վեր Դարակասանում հայերն ապրել են հոծ զանգվածներով, որը ժամանակի ընթացքում համալրվել է Շահ Աբասի, Մեծ բռնազաղթով, /1604-1605թթ./: Իրենց Նոր բնակավայրում, դարերի ընթացքում պարսկահայերը ստեղծել են էթնոմշակութային շատ արժեքներ, որոնց մի անկասկածելի մասն է կազմում նրանց ժողովրդական բանահյուսությունը: Ցայսօր անկասկածաբար ժողովրդական երգն ու բանը կենցաղավարում է պարսկահայերի մեջ, քանի որ նրանք վերջին տարիներն են հայրենադարձվել և հավատարիմ են իրենց բանահյուսական ավանդներին:

3. 1983 թ. դաշտային աշխատանքների միջոցով Հրազդանում վերաբնակեցված հայերից զբաղված նյութը հետազոտություն է ընձեռում ամփոփելու տեղավայրի բանահյուսական նկարագրի մեղմորդ վիճակը հեռավալ առումներով:

Ա. Վիպական բանահյուսությունը զբաղած նմուշներն արտացոլում են ժողովրդի կյանքում ավերիչ բռնազաղթի անց ու դարձերը, կյանքը օտար հողի վրա, դժվարությունների հաղթահարման համարունությունը, բնօրրանի հայրենաբաղձ կարոտը:

Բ. Ժամանակագրական-վարքագրական ռախահյուսությունը զբաղած նմուշներն արտացոլում են նրանց առտնին կյանքին անմիջականորեն առնչվող իրադարձությունները՝ 1832 թ. սովը, 184 թ. երաշտը, կենդանիների հիվանդությունները և ստակելը, 1866 թ., 1869-1872 թթ. երաշտը, թանկությունը, սովն ու համաճարակը հավասարա-

տող, ինչպես նաև անցյալ դարավերջից օտարամուծ սովորույթները, օրինակ՝ Ռուսաստանից ներմուծված ինքնահոով /սամովարով/ և շաքարով /տաքաթով/ թեյ խմելուն նվիրված և այլ թեմաներով երգերը:

Գ. Ապրելով ներփակ կյանքով, պարսկահայերը պահպանել են Արեւելյան Հայաստանում այսօր հազվագեղ հանդիպող երկարաշունչ հոգեվոր երգերը, տերուհայան աղոթքները, ինչպես նաև ծիսական, հառկապես հարսանեկան երգերը:

Դ. Ընդգծված ողբերգական երանգ ունեն դարիբիւն /պանդուխտին՝ օտար երկրներ աշխատանքի մեկնածին/ և էջբերին /գինվորին/ նվիրված երգերը:

4. Գրառված բանահյուսական և ազգագրական նյութերում առանձնառու է նուրիշկյանի ավետարանին նվիրված ուշագրավ նյութերը: Զրիստոնեական սրբերին /հառկապես սուրբ Սարգիսին/ գուգահեռ սրբացվել են գրավոր արժեքները /Նուրիշկյանի ավետարանին մեռնող-հառնող աստվածության հատկանիշներ վերագրելը/: Իսկ երբ պակասել է ժողովրդի գործությունը /նկատել է առնվում վերջին տասնամյակի արտագաղթը/, սրբի գործությունն էլ է նվազել, քանզի,,Սուրբը տերն է առնում գորավոր,,:

5. Նոր միջավայրին ու կարգերին հարմարվելու, ազգայինը պահպանելու բարի երազանքները պարսկահայերը արտահայտել են նոր տերերի կերպարներին և սոցիալական կյանքի արտացոլմամբ /այս առումով հարուստ նյութ են պարունակում ավանդույթ ունեն իսկ հեքիաթները/: Միջնադարյան ժամանակների դաժան բռնակալ Շահ Աբասի կերպարը խմբագրվել է ժողովրդի մտապատկերում և բանահյուսության մեջ պահպանվել է պատմագիտական աղբյուրներից հայտնի կերպարին անհարկ նկարագրով: Ժամանակի ընթացքում ժողովուրդը դեն է նետել տիրակալի նկարագրի իր համար ոչ ցանկալի հատկանիշները և պահել բաղձալիս, համուկերպվելով նոր օրրանին, իր պատկերացումներում սրբագրել է այդ կերպարը, նրան վերագրելով արդարամիտ թագավորի հատկանիշներ, որը և հստակ արտացոլում է ստացել ժողովրդական բանահյուսության մեջ /հմտ. Արշակ 2-րդի, Իվան Ահեղի և այլոց կերպարների արտացոլումը համապատասխան ժողովրդական բանահյուսության մեջ/: